**Բաց կանչ Դաչա Ռադիո**
**Գյումրիի այգիները**

Գյումրի տանող ճանապարհին տաքսու մեջ ուտում էի այն միակ խնձորը, որ բերել էի ինձ հետ Բեռլինի այգուց: Համը թարմ էր, թթու և քաղցր, և այն խառնվում էր իմ քիմքում արտանետվող գոլորշիների և փոշոտ վերմակների բույրին: Որպես Գերմանիայից ժամանած արվեստագետ, տեղական համայնքների համար օտար՝ ես ինձ անչափ հուզված եմ զգում, բայց միևնույն ժամանակ հեռու Հայաստանի պատմությունից և 1988 թվականի ավերիչ երկրաշարժից: Այժմ ես ապրում եմ Մուշ 2-ում, այս քաղաքի ավերածությունից հետո ստեղծված ամենամեծ թաղամասերից մեկում: Տեսարանս բացվում է դեպի նոր տներ, հին լեռներ և փոքրիկ այգի՝ պարսպապատված քարե պատով և մեքենայի անվադողերով: Միշտ, միշտ, ինչ-որ բան աճելու է:

**Datscha Radio-ն** շրջիկ այգի-ռադիոնախագիծ է, որն իրականացվում է Բեռլինից արվեստագետ և ճանապարհորդ Գաբի Շեֆների կողմից:
Datscha Radio-ի այգեգործության գաղափարն գործ ունի այգիների հասկացության հետ որպես մեր մշակութային ժառանգության մաս: Հայաստանում իրականացվող նախագծի դեպքում այս սկզբունքը տարածվում է շրջապատի մասին հոգ տանելու համար՝ լինի դա բույսեր, ջուր, հող, տուն, թե ընտանիք, արվեստն ու այգեգործությունը որպես արժեքավոր ռազմավարություններ կիրառելուն:

**Datscha Radio-ն** հրավիրում է ձեզ մասնակցել «Գյումրու այգիներին»՝ կիսելով միմյանց հետ կապվելու ուրախությունը՝ տեղում, եթերում և առցանց:
Մեր հյուրերի և մասնակիցների հետ միասին մենք ուղիղ եթեր կհեռարձակենք սեպտեմբերի 29-ին՝ կիրակի օրը: Մենք նաև կվերակենդանացնենք միկրոհեռարձակման ավանդույթը: Ծրագիրը կներկայացնի զրույցներ և ընթերցումներ, համերգներ, հնչյունային արվեստ: Այն կկազմակերպվի **Art Basis -ի** և Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի Գյումրու մասնաճյուղի հետ համագործակցությամբ:
Քանի որ այս ռադիոկայանը «տնային» է, փործարարություն է և բացարձակապես ոչ կոմերցիոն, խնդրում ենք հասկանալ, որ մենք չենք ընդունում մեյնսթրիմ երաժշտություն կամ միքսերը: Փոխարենը՝

**Մեզ հետաքրքրում է**
- Տեղական գիտելիքներ կենդանական և բուսական աշխարհի, էկոլոգիայի և խոհարարության արվեստի մասին
- Պոեզիա/զրույցներ՝ կապված հարևանության, ընկերության և ընտանիքի, վշտի և վերականգնման հետ
- Ձայնային արվեստ, դաշտային ձայնագրություններ և ռադիոյի խաղային մոտեցումներ
- Ավանդական երաժշտություն և երգեր
- Եթե ցանկանում եք կենդանի ելույթ ունենալ, խնդրում ենք ուղարկել 100 բառ ձեր կատարման մասին:
- Եթե հետաքրքրված եք կենդանի խոհարարությամբ զբաղվել կամ ներկայացնել բաղադրատոմսեր, խնդրում ենք գրություն ուղարկել, թե ինչպիսի ուտեստ եք պատկերացնում
- Ձեր անձը. արի՛ և ստեղծի՛ր ռադիո:

**Վերջնաժամկետ՝ սեպտեմբերի 25, 2024թ**

- Անգլերեն լեզուն պարտադիր չէ:
- Ձեր բանավոր խոսքը կամ աշխատանքի մասին տեղեկությունը կարող եք նաև ուղարկել ձեր մայրենի լեզվով
- Մի՛ ամաչեք, կգտնվեն թարգմանիչներ, որոնք կօգնեն ինձ հասկանալ:

**Ձեր աշխատանքը**
- Խնդրում ենք ուղարկել ձեր ձայնային աշխատանքը ՄԻԱՅՆ որպես mp3 (ցանկալի է 320 mbit)
- անվանեք ձեր ֆայլերը firstname_lastname_title_min (րոպե)
- ներառեք pdf, որը կպարունակի մինչև 100 բառ ձեր ստեղծագործության և ձեր անձի մասին
- վերնագրում նշեք Գյումրու այգիներ
- ուղարկեք ձեր աշխատանքների հղումը info@datscharadio.de հասցեին կամ ձեր ֆայլերը անմիջապես wetransfer-ի միջոցով:

*Դուք պետք է ունենաք ձեր արտադրանքի հեղինակային իրավունքները, լինի դա ձայնային, թե գրված:

**Ինչպես լսել**
Դուք կարող եք հեռարձակումը առցանց լսել datscharadio.de կայքում և ընտրված ռադիոկայաններով, որոնք կհայտարարվեն ավելի ուշ: Կարող եք լսել տեղում (Գյումրիում վայրը դեռ որոշված չէ, բայց շուտով կհրապարակվի մեր սոցիալական էջերում և datscharadio.de-ում): Մեզ սիրում ենք բաց ստուդիայի իրավիճակը. ողջունելի են կատարողներ, ինքնաբուխ կենդանի հյուրեր և այցելուներ:

**Կայունություն**
Ա Datscha Radio-ի համար կայունությունը չի որոշվում կրկնօրինակվող արտադրանքի համընդհանուր հասանելիությամբ, այլ միասին լինելու և տեղական գիտելիքների փորձով, որը հիշվում և թարգմանվում է ընդհանուր ապագայի մեջ:
Բ Դու կարող եք հանել ձեր հին ռադիո սարքերը պահարաններից և փորձարկել դրանք անալոգային ընդունիչով ռադիոկայանի մոտակայքում:

Վճար
Datscha Radio-ն աշխատում է ոչ առևտրային հիմունքներով, հետևաբար մենք չենք կարող ձեզ փոխհատուցել ձեր արժեքավոր ժամանակի և աշխատանքի համար: Մենք ունենք ռադիոկայան և արվեստի հարթակ բացահայտումների, փոխանակման և շփումների համար: Օֆլայն աշխարհում:

**Հեղինակային իրավունքներ**
Բոլոր հեղինակային իրավունքները մնում են արվեստագետներին: Ծրագրի մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք datscharadio.de:
Հարցերի համար գրեք՝ info@datscharadio.de
Facebook՝ datscharadio.de || Insta: datscharadio
Տեքստը՝ Գաբի Շեֆների; Պատկերը՝ հայկական զարդանախշ: